

Ժ Դ

Ս. ՊՈՂԻԿՏՈՍԻ ՎԱՆՔԸ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ՄԷՋ

1. ՄԵԼԻՏԻՆԷ Ս. ՊՈՂԻԿՏՈՍԷՆ ԽՈՒԱՅ ԵՆ ԱՆՈՒ ժամանակը.

Մելիտինէ (Մալաթիա) մեր այս գրուածքին բովանդակութեան հետ սերտօրէն կապակցութիւն ունենալուն համար, պէտք է պատմական համառօտ ծանօթութիւն մը տալ անոր մասին, Ս. Պողիկտոս վկայէն առաջ և անոր ժամանակը:

Մելիտինէ կը գտնուի Սերաստիոյ հարաւը և Եփրատի արևմտեան կողմը. ան հիմնարկուած է Քրիստոսէ 800 տարի յառաջ, ինչպէս կը հաստատեն խաղիական նորագիւտ բեւեազիր յիշատակարաններ՝ որ կը գտնուին Հայաստանի զանազան կողմերը և զիտնոց մանրագնին քննութեանց առարկայ եղած են: Այս զիտական խուզարկութիւնք կը յայտնեն թէ Մելիտինէ կանուխէն բնակավայրը եղած է « Հատեանց », որոնք շատ պատերազմներ մղած են Ասորեստանցւոց դէմ, և Խաղեան թագաւորք երբեմն երբեմն յարձակելով Մելիտինէի վրայ, զերիներ տարած են իրենց երկիրը, գրաւած են զայն և երկար դարեր պահած են իրենց տիրապետութեան տակ: Մելիտինէ զբացի երկիր մըն է Ծոփաց աշխարհին, ինչպէս վերջնոյս, նոյնպէս նախահայերու հետ ան ունեցած է սերտ յարաբերութիւններ և որոնք չեն դադրած քրիստոնէական թուականներուն: Թէ՛ Մելիտինէ քաղաքին նախնական յարաբերութեանց և թէ՛ Մեծ Ծոփի և թէ՛ Շահունի Ծոփի անուանց ծագման մասին Խաղի արձանագրութեանց լուսաբանութեան համաձայն, Գերմանացի զիտական մը, Տր. Վ. Բէլք, շատ լուրջ և շատ հիմնաւոր զբոլուածք մը ունի, (ընդարձակ տեղեկութեանց համար, ընթերցողը կրնայ գիմել Հանդիս Ամստըս, 1903. թ. 11. նոյ. էջ, 321-325): Առանց նկատի առնելու Խաղի արձանագրութիւնները, ոմանք այնպէս կը կարծեն թէ Մելիտինէ հռոմէական հիմնարկութիւն մըն է. բացարձակ սխալ մըն է այս. միայն պէտք է